Ռեյ Բրեդբերի

Անթերի, կատարյալ սպանություն

Սպանության գաղափարն էնքան կատարյալ էր, էնքան աներևակայելիորեն հիասքանչ, որ ինձ՝ գլուխս կորցրած, Ամերիկայի մյուս ծայրը քշեց:

Չգիտես ինչու էս միտքը ծննդյանս օրը գլուխս եկավ, երբ քառասունութ տարեկան դարձա: Ինչու՞ ոչ երեսուն կամ քառասուն, չգիտեմ, չեմ կարող ասել: Երևի էն տարիներն ավելի անհոգ էին, ու ժամանակը չէի նկատում, ու քունքերիս՝ արծաթ ներկվելն էլ չէի նկատում, ու հայացքիս փոխվելն էլ չէի նկատում…

Ինչևէ, քառասունութերորդ տարեդարձիս գիշերը կնոջս կողքին անկողնում պառկած, երեխաներս՝ լուսնի լույսով ողողված մյուս ննջարաններում քնած, որոշեցի.

Հիմա վեր կկենամ ու կգնամ Ռալֆ Անդերհիլին սպանելու:

Ռալֆ Անդերհիլի՞ն, բղավեցի մտքումս, Աստծու սիրույն, Անդերհիլն ո՞վ է:

Երեսունվեց տարի հետո սպանե՞մ: Ինչի՞ համար:

Ո՞նց թե, մտածեցի, բա որ տասներկու տարեկան էի, ինձ ի՞նչ էր արել:

Մի ժամ անց, ինչ-որ աղմուկից, կինս զարթնեց:

– Դա՞գ, – ձայն տվեց, – ի՞նչ ես անում:

– Իրերս եմ հավաքում, – ասեցի, – որ գնամ:

– Հա՛, – մրմնջաց կիսաքուն, կողքի շրջվեց ու քնեց:

– Նե՛րս անցեք, բոլորդ նե՛րս անցեք, – կանչեց կառամատույցով հետ-առաջ անող ուղեկցորդը:

Գնացքը ցնցվեց ու ճռնչաց:

– Շուտով կգամ, – բղավեցի ու ցատկեցի գնացքը:

– Ե՞րբ, – բղավեց կինս: – Երանի ինքնաթիռով գնայիր:

Ինքնաթիռո՞վ, մտածեցի, որ զրկվեի երկար ճանապարհին սպանությանս մասին մտածելու բերկրանքի՞ց: Որ զրկվեի ատրճանակս յուղելու, երեսունվեց տարուց հին հաշիվներս մաքրելու համար նրա դռանը կանգնած՝ Ռալֆ Անդերհիլի դեմքի արտահայտությունը պատկերացնելու հաճույքի՞ց: Ինքնաթիռո՞վ: Ավելի շուտ երկրիս մյուս ծայրը ոտքով կհասնեի՝ գիշերները խարույկ անելով, մաղձս ու լեղիս խորովելով

ու հին, չորացած, բայց դեռ չմեռած թշնամանքս ուտելով, ու էդպես էլ չսպիացած վերքերս տնտղելով: Ինքնաթիռո՞վ:

Գնացքը շարժվեց: Կինս գնացել էր:

Սլացա դեպի Անցյալը:

Երկրորդ գիշերը, Կանզասով անցնելիս, մի անասելի փոթորիկ սկսվեց: Մինչև ժամը չորսը, արթուն, մոլեգնող քամու ու որոտի ձայներն էի լսում: Փոթորկի ամենաթեժ ժամին՝ պատուհանի սառն ապակուն սև-սպիտակ լուսանկարի պես դրոշմված՝ դեմքս տեսա ու մտածեցի.

Էս ապուշն ու՞ր է գնում:

Ռալֆ Անդերհիլին սպանելու:

Ինչու՞: Հենց էնպե՛ս:

Չես հիշու՞մ, ձեռքիս ո՛նց խփեց: Կապտե՛լ էր: Երկու ձեռքս ծայրից ծայր կապտել էին. կապույտ, տեղ-տեղ սև, բիծ-բիծ դեղին կապտուցներ էին: Խփեց ու փախավ, է՛դ էր Ռալֆ Անդերհիլը. խփեց ու փախավ…

Բայց դու… դրան սիրում էիր, չէ՞:

Հա, սիրում էի՝ ութ, տասը, տասներկու տարեկան տղայի սիրով, երբ աշխարհն անմեղ է, իսկ տղաները չար են՝ չարից չար, որովհետև չեն հասկանում, թե չարն ի՛նչ է, չեն հասկանում, բայց մեկ է՝ անում են: Երևի գիտակցությանս մի գաղտնի անկյունում ես ուզում էի, որ ինձ խփեն: Մենք՝ սիրող ընկերներս, իրար պետք էինք: Ինձ պետք էր, որ խփի, ես էլ նրա՛ն էի պետք, որ խփի: Իմ սպիերը մեր սիրո վկայությունն էին:

Է՞լ ինչ պատճառ կա, որ էսքան տարի անց ուզում ես Ռալֆին սպանել:

Գնացքի շչակը սուլեց: Գիշերային տեսարանները սլանում էին կողքովս:

Հիշեցի էն գարունը, որ նոր բրդի կոստյումով դպրոց էի եկել, ու ոնց Ռալֆը խփեց, գցեց գետին, ձյան ու սև ցեխի մեջ թավալեց: Հետո կանգնել՝ ծիծաղում էր, իսկ ես, ամոթից գլուխս կախ, ցեխակոլոլ, վախեցած, որ ծեծ եմ ուտելու, տուն էի գնում, որ շորերս փոխեմ:

Ըհը՛: Է՞լ:

Չես հիշու՞մ, ո՛նց էիր երազում Տարզանի պատմությունից էն կավե արձանիկները հավաքել. Տարզանինը, Քալա կապիկինը, Նումա առյուծինը՝ հատը քսանհինգ ցենտ:

Ո՞նց մոռանամ: Ի՛նչ սիրուն էին: Էսքան տարի անց, օ՛, կանաչ հեռավոր

ջունգլիներում ծառից ծառ ցատկոտող մարդ-կապիկի ճիչերը դեռ մտքումս են: Բայց Մեծ ճգնաժամի կեսին քսանհինգ ցենտ ո՞վ ուներ: Ոչ ո՛ք:

Ռալֆ Անդերհիլից բացի:

Ու մի օր Ռալֆը հարցրեց՝ արձաններից մեկը կուզե՞ս:

Կուզե՞մ, բղավեցիր: Հա՛, հա՛:

Էն նույն շաբաթն էր, որ եղբայրդ, կես-սիրով, կես-արհամարհանքով, բեյսբոլ խաղալու իր հին, բայց թանկարժեք ձեռնոցը քեզ էր տվել:

– Լավ, – ասեց Ռալֆը: – Տարզանի ավելորդ արձանիկս քեզ կտամ՝ բեյսբոլի ձեռնոցի դիմաց:

Ապու՛շ, մտածեցի, արձանիկը քսանհինգ ցենտ արժի: Բեյսբոլի ձեռնոցը՝ երկու դոլար:

Արդար չի՛, չանե՛ս:

Բայց ես ձեռնոցն առա ու վազելով տարա Ռալֆենց տուն ու տվեցի, իսկ ինքը, եղբորիցս է՛լ ավելի արհամարհանքով, Տարզանի արձանիկը տվեց, ու ես, երջանկությունից պայթելով, վազեցի տուն:

Երկու շաբաթ եղբայրս ոչինչ չիմացավ ձեռնոցի ու արձանիկի մասին: Երբ որ իմացավ, բնության գիրկը՝ արշավի էինք գնացել: Ինձ թողեց մենակ, մոլորված, որ ապուշությանս համար դաս լինի:

– Տարզանի արձանի՛կ: Բեյսբոլի ձեռնո՛ց: Թե մե՛կ էլ քեզ բան տամ:

Բնության գրկում մի տեղ պառկել էի գետնին ու լաց էի լինում, ու մեռնել էի ուզում, բայց չգիտեի, թե վերջին շունչս, որ թշվառ հոգիս էր, ո՛նց փչեի:

Որոտը մրմնջում էր:

Անձրևի կաթիլները լուսամուտի ապակուն էին թափվում:

Է՞լ: Էդքանն ու վե՞րջ:

Չէ: Մի բան էլ կա: Մյուս բոլորից սարսափելի:

Տարիներ շարունակ վազում էիր Ռալֆենց տուն, որ տոն օրով առավոտ ծեգին պատուհանի ցողոտ ապակուն խճաքար նետես, որ կանչես, գնաք՝ զով վաղորդյան կայարանում, հուլիսին, օգոստոսին, կրկեսի գալը դիմավորեք, բայց ոչ մի օր, ոչ մի անգամ Ռալֆը քո տուն չվազեց:

Ոչ մի օր, ոչ մի անգամ ինքը, կամ ով լինի, չեկավ, չապացուցեց, որ ընկեր է: Ոչ մի անգամ դուռդ չթակեցին: Ննջարանիդ ապակին էդպես էլ թույլիկ չշխկշխկաց, չզնգաց պատուհանիդ գցած մանր ու մեծ խճաքարերից:

Ինքդ էլ միշտ գիտեիր. էն օրը, որ Ռալֆենց տուն չգնաս, լուսաբացին դուրս չկանչես, ձեր ընկերության վերջին օրը կլինի: Նույնն էր, թե մեռնես ու թաղմանդ ոչ ոք չգա: Դպրոցում որ Ռալֆին պատահեիր, չէր զարմանա, չէր հարցնի, շորիդ նստած փոշու հատիկի չափ անգամ չէր հետաքրքրվի, թե՝ ու՞ր ես, Դա՛գ, բա ու՞մ եմ ծեծելու: Ու՞ր ես կորել, ա՛յ տղա, բա ու՞մ քիթն եմ ջարդելու:

Էս բոլոր մեղքերը չմոռանա՛ս: Հատկապես վերջինը.

Որ ո՛չ մի անգամ իմ տուն չեկավ, առավոտ շուտ չարթնացրեց, լուսաբացին մանր խճի կարկուտ չտեղաց պատուհանիս ապակուն, դուրս չկանչեց, որ ամռան օրը միասին վայելենք:

Հենց է՛ս վերջինի համար, Ռա՛լֆ Անդերհիլ, մտածեցի՝ գիշերվա չորսին գնացքում նստած, փոթորիկը՝ հանդարտված, արցունքն աչքերիս, էս վերջին կաթիլի՛ համար, մենակ դրա՛ համար վաղը գիշեր քեզ պիտի սպանեմ:

Սպանե՞ս, մտածեցի, երեսունվեց տարի ա՞նց: Տե՛ր Աստված, նավապետ Աքաաբից էլ խելա՛ռ ես:

Գնացքը տնքում էր: Մեզ երկրի մյուս ծայրն էր տանում, սև մետաղյա կերպարանք առած՝ ճակատագրի ոգու ուժով, մեքենա դարձած՝ վրեժի ոգու նման:

Ասում են, իբր հնարավոր չի նորից տուն դառնալ:

Սու՛տ է:

Թե բախտդ բերեց ու պահը ճիշտ եղավ, մայրամուտին կհասնես, երբ որ հին քաղաքդ դեղին լույսով է ողողված:

Գնացքից իջա, անցա Կանաչ քաղաքով, մայրամուտի բոսորով ներկված դատարանի շենքը տեսա: Ծառի ճյուղ չկար, որ շողշողացող ոսկի դուբլոններով զարդարված չլիներ: Տանիք չկար, ջրհորդան չկար, որ պղնձագույն ու ոսկի չշողար:

Նստեցի դատարանի մոտ, հրապարակում, շների հետ զբոսնող ծերունիների կողքին, մինչև արևը մայր մտավ, ու Կանաչ քաղաքը մթնեց: Ուզում էի Ռալֆ Անդերհիլի մահվան միտքը վայելել:

Դեռ ոչ ոք երբեք էսպիսի հանցանք չէր գործել:

Կսպասեմ, կսպանեմ ու կգնամ՝ օտարների մեջ խառնված մի օտարական:

Ռալֆ Անդերհիլի դին նրա դռանը գտնող ու՞մ մտքով պիտի անցնի, որ տասներկու տարեկան ինչ-որ տղա, մի տեսակ Ժամանակի մեքենա դարձած գնացքով եկել, ինքն

իր հանդեպ գարշելի արհամարհանքի միջով անցել, սպանել է սեփական Անցյալը:
Տրամաբանությունից վեր բան է՝ հենց խելագարությամբ ապահով:
Վերջապես, հոկտեմբերյան զով երեկոյով, ժամը ութ անց կես քաղաքը կտրեցի ու ձորակն անցա:
Չէի էլ կասկածում, որ Ռալֆ Անդերհիլը դեռ էնտեղ կլինի:
Չնայած մարդիկ, իհարկե, տեղափոխվում են…
Զբոսայգու փողոց թեքվեցի, երկու հարյուր քայլ գնացի, հասա փողոցի մինուճար լապտերին ու դիմացս նայեցի: Ռալֆ Անդերհիլի երկհարկանի ճերմակ քարե տունն ինձ էր սպասում:
Զգում էի, որ ներսում է:
Էնտեղ էր՝ ինքն էլ քառասունութ տարեկան, ոնց որ ես՝ էստեղ, սիրտս՝ հին, մաշված, կործանող դառնությամբ լցված:
Լույսի տակից դուրս եկա, պայուսակս բացեցի, ատրճանակը բաճկոնիս աջ գրպանը դրեցի, պայուսակը փակեցի ու թաքցրի թփերի մեջ, որ հետո գամ, վերցնեմ, ձորակն անցնեմ, քաղաքն անցնեմ ու գնացք նստեմ:
Փողոցն անցա ու կանգնեցի տան առաջ, նույն տան, որի առաջ երեսունվեց տարի առաջ էի կանգնել: Նույն պատուհաններն էին, որոնց վրա սիրով ու անմնացորդ հավատարմությամբ, գարնանային ծաղկեփնջերի տեղ՝ բռով խճաքարեր էի նետել:
Նույն մայթն էր՝ տեղ-տեղ հրավառության հետքերը դեռ վրան, երբ անհիշելի ժամանակներում Հուլիսի չորսի առթիվ ես ու Ռալֆը, ցնծության ճիչերով, արար աշխարհը հոդս էինք ցնդեցնում:
Մոտեցա շեմին ու փոստարկղի վրա մանր տառերով գրված անունը տեսա.
ԱՆԴԵՐՀԻԼ:
Բա որ կի՞նը դուռը բացի:
Չէ, մտածեցի, հենց ինքն էլ, հունական ողբերգությունների կատարյալ տրամաբանությամբ, դուռը կբացի, գնդակը կընդունի ու համարյա թե ուրախությամբ կմահանա՝ հին հանցանքների ու մանր մեղքերի համար, որոնք ինչ-որ ձևով հանցանք էին դարձել:
Զանգը տվեցի:
Տեսնես կճանաչի՞, մտածեցի, էնքան ժամանակ է անցել: Կրակելուց առաջ, վերջին վայրկյանին անունդ կասե՛ս. պիտի իմանա՝ ով ես:

Լռություն:

Նորից զանգը տվեցի:

Դռան բռնակը ճռռաց:

Սրտի ուժեղ բաբախյունով՝ ձեռքս ատրճանակին տարա, բայց գրպանից չհանեցի:

Դուռը բացվեց:

Ռալֆ Անդերհիլն էր՝ առջևս կանգնած:

Աչքերը թարթելով՝ վրաս էր նայում:

– Ռա՞լֆ, – հարցրեցի:

– Այո՞, – ասեց:

Էսպես կանգնած էինք՝ կեղեքված, իրականում երևի հազիվ հինգ վայրկյան: Բայց, Տե՛ր իմ, որքա՛ն շատ բան կատարվեց էս հինգ ակնթարթում:

Ես Ռալֆ Անդերհիլին տեսա:

Հստա՛կ:

Ախր տասներկու տարեկանիցս էս կողմ չէի տեսել:

Էն ժամանակ ածդահա էր, որ վերևից վրաս հարվածներ էր տեղում, ծեծում էր ու բղավում:

Հիմա փոքրամարմին ծերունի էր:

Հասակս մետր ու ութսուն է:

Իսկ Ռալֆ Անդերհիլը տասներկու տարեկանից հետո հասակ չէր առել:

Առջևս կանգնած մարդու հասակը հազիվ մետր ու վաթսունի հասներ:

Հիմա ածդահան ե՛ս էի:

Ապշել էի: Աչքերս չէի կտրում: Ու ավելին տեսա:

Ես քառասունութ տարեկան էի:

Բայց քառասունութ տարեկան Ռալֆ Անդերհիլի գլխին համարյա մազ չէր մնացել, եղածն էլ՝ խամրած, մոխրագույն, սև-սպիտակ: Տեսքից վաթսուն կամ վաթսունհինգ էր թվում:

Ես առողջ էի:

Ռալֆ Անդերհիլը դալուկ էր, ասես մագաղաթ: Դեմքին հիվանդության դրոշմ կար:

Ոնց որ արևազուրկ տեղերով ճամփորդած լիներ: Տեսքից քայքայված էր ու հյուծված:

Շունչը թաղման ծաղիկների բույր էր արձակում:

Էս ամենն ընկալելը նախորդ գիշերվա փոթորկին էր նման՝ բոլոր կայծակներն ու

որոտները մի ճայթյուն դարձրած: Մենք՝ ճայթյունի կենտրոնում:

Սրա համա՞ր էի եկել, մտածեցի: Սա՛ էր Ճշմարտությունը: Ժամանակի մեջ էս զարհուրելի պահը: Ո՛չ թե որ ատրճանակս հանեմ: Ո՛չ թե որ սպանեմ: Ուղղակի… Որ Ռալֆ Անդերհիլին տեսնեմ. հիմա՛:

Էսքան բան:

Որ հասնեմ, կանգնեմ ու նայեմ նրան, թե ինչ է դառել:

Ռալֆ Անդերհիլը ձեռքով շարժում արեց, մի տեսակ զարմացած: Շուրթերը դողացին: Աչքերը վերից վար վրայովս սահեցին, իսկ միտքը դռանը կանգնած աժդահային էր տնտղում: Վերջապես տկար, նվազ ձայնով ասեց.

– Դա՞գ…

Ես հետ քաշվեցի:

– Դա՞գ, – կրկնեց ապշած, – դու ես, չէ՞:

Էս մի բանը չէի սպասել: Ախր մարդիկ չպիտի՛ հիշեն: Ո՞նց հիշեն: Էսքան տարի՞:

Ինչի՞ պիտի մտածեր, ջանք թափեր, հիշեր ու ճանաչեր:

Մտքովս մի խելառ միտք անցավ, որ հեռանալուցս հետո նրա կյանքի կեսն ինձ հետ փլուզվել էր: Ե՛ս էի նրա աշխարհի կենտրոնը եղել՝ որ վրաս հարձակվեր, հարվածներ տեղար, ծեծեր ու կապտուցների մեջ կորցներ: Ամբողջ կյանքը փուլ էր եկել, ընդամենը որովհետև երեսունվեց տարի առաջ թողել, հեռացել էի:

Ի՛նչ հիմարություն: Բայց իմաստության ինչ-որ պատառիկ մկան պես կրծում էր ուղեղս ու ծղրտում. Ռալֆը քեզ պետք էր, հա՛, բայց մի բան էլ կա. դու էլ իրե՛ն էիր պետք: Ու հենց էն միակ աններելի, վիրավորական բանն արեցիր: Անհետացա՛ր:

– Դա՞գ, – նորից հարցրեց, որովհետև անձայն, ձեռքերս գրպանում, մնացել էի նրա շեմին կանգնած: – Դու ես, չէ՞:

Հենց էս պահի համար էի եկել:

Ենթագիտակցությանս մեջ մի տեղ միշտ էլ գիտեի, որ զենքը չեմ օգտագործելու: Հետս բերել էի, ճիշտ է, բայց Ժամանակն ինձանից առաջ էր տեղ հասել, ինչպես և տարիքն ու ավելի փոքր, ավելի զարհուրելի մահերը…

Վեց գնդակ, ճիշտ սրտի մեջ:

Բայց ես ատրճանակս չօգտագործեցի: Ընդամենը շուրթերս կրակոցի ձայն շշնջացին: Ամեն շշուկի հետ Ռալֆ Անդերհիլն ասես տասը տարով ծերանար: Վերջին շշուկիս ժամանակ արդեն հարյուր տասը տարեկան էր դարձել:

– Թը՛խկ, – շշնջում էի: – Թը՛խկ: Թը՛խկ: Թը՛խկ: Թը՛խկ: Թը՛խկ:

Ամեն շշուկիս հարվածից մարմինը ցնցվում էր:

– Մեռած ես: Աստվա՛ծ իմ, Ռա՛լֆ, մեռա՛ծ ես:

Շրջվեցի, աստիճաններով իջա ու արդեն փողոցին էի հասել, որ հետևիցս կանչեց.

– Դա՛գ, դու ես, չէ՞:

Չպատասխանեցի. շարունակեց քայլել:

– Պատասխա՛ն տուր, – կանչեց նվազ ձայնով: – Դա՛գ, Դագ Սպո՛ղինգ, դու ես, չէ՞: Ո՞վ է: Ասա՛, ո՞վ ես:

Պայուսակս վերցրի, կտրեցի ծղրիդների ձայներով հագեցած գիշերը, ձորակի մութը, կամուրջն անցա, աստիճաններով բարձրացա ու հեռացա:

– Ո՞վ ես, – վերջին անգամ լսեցի նրա հուսահատ նվազ կանչը:

Երբ շատ էի հեռու, շրջվեցի:

Ռալֆ Անդերհիլի տան բոլոր սենյակների լույսերը վառ էին: Կարծես հեռանալուցս հետո սենյակից սենյակ էր գնացել ու հերթով վառել:

Ձորակի մյուս կողմում մարգագետնին կանգ առա՝ էն տան դիմաց, որ ծնվել էի: Կռացա, մի քանի խճաքար վերցրի բուռս ու արեցի էն, ինչ երբեք, կյանքումս ոչ մի անգամ ոչ ոք չէր արել:

Սկսեցի խփել էն պատուհանին, որտեղ կյանքիս առաջին տասներկու տարիներն ամեն առավոտ արթնացել էի: Սկսեցի սեփական անունս կանչել՝ ընկերոջս, որ միասին խաղալու գնանք էն վաղուց անցած ամառվա օրով:

Մի քիչ սպասեցի. ճիշտ էնքան, որ իմ մյուս՝ ջահել եսը մոտս գա:

Հետո արագ, ասես արշալույսից փախչելով, միասին լքեցինք Կանաչ քաղաքն ու սլացանք, փա՛ռք Աստծու, Այսօրը, Ներկան, որ էլ երբե՛ք հետ չդառնանք:

Թարգմանությունը անգլերենից՝ Նունե Թորոսյանի